Թերեզա Ամրյան

Չեմ վախենում

Ամեն տարի ապրիլի 17-ին նորից հիշում եմ, որ հեմոֆիլիայի միջազգային օրն է: Գիտե՞ք ինչ է հեմոֆիլիան . հեմոֆիլիան իր տիրոջ արյան մեջ է ապրում և ժամանակ առ ժամանակ արյուն է քամում, հեմոֆիլիայից չեն ազատվում, մի կերպ հաշտվում և հետն ապրում են մինչև կյանքի վերջ: Հեմոֆիլիան կանխակալ է, նա ընտրում է տղաներին . հազարից մի աղջիկ կհանդիպես, որի արյունը չի մակարդվում:

Ամեն անգամ Արյունաբանական կենտրոն գնալիս մի նորավարտ, երիտասարդ բժիշկ եմ տեսնում: Ամեն անգամ զգում եմ, ոնց են ծերանում ու նորից երիտասարդանում այդ հիվանդանոցի բժիշկները:

Արյունաբանական կենտրոնը նախկինի նման չէ . այն վերանորոգել են, պատերը ծածկել տարբեր գույներով: Այն առաջվա պես անտեսված չէ . ասում են, որ նույնիսկ ազդեցիկ մարդկանց տիկնայք, հայտնի կանայք են այցելում Արյունաբանական կենտրոնում հայտնված երեխաներին:

Ամեն տարի ապրիլի 17-ին այդ հիվանդանոց եմ գնում այնպես, ինչպես սրբավայր ուխտի կգնամ՝ աղոթքով, պատկառանքով:

Ամեն անգամ Արյունաբանական կենտրոնին մոտենալիս դող եմ զգում . վախենում եմ, որ ամեն ինչ նորից կկրկնվի:

Վախենում եմ, որ արյան սակավությունից հիվանդանոցի շեմին գլուխս կպտտվի:

Վախենում եմ, որ ցած կընկնեմ և արյունահոտ թունելներով կսահեմ դեպի ներքև:

Վախենում եմ, որ նորից աչքերս կբացեմ ու կտեսնեմ հիվանդասենյակի գորշ կամ դեղնավուն պատերը:

Վախենում եմ, որ չեմ ճանաչի իմ բժշկին . նա իմ տեսած առաջին արտասահմանյան մուլտֆիլմի միջի Հիսուսին է նման:

Վախենում եմ, որ չեմ կարողանա շնչել, որովհետև քթանցքներս լցված կլինեն դեղերով ու վիրակապերով . դրանք կմնան այնքան ժամանակ մինչև քթից եկող արյունը մակարդվի:

Վախենում եմ, որ նորից կտեսնեմ թափանցիկ ռետինե խողովակով հոսող, կաթիլ առ կաթիլ իմ երակի մեջ լցվող դեղին հեղուկը:

Վախենում եմ, որ նորից չեմ կարողանա շարժվել:

Վախենում եմ, որ նորից տատիկս անքուն կկանգնի մահճակալիս մոտ և կբռնի թևս, որպեսզի ասեղը դուրս չթռչի երակիս միջից:

Վախենում եմ, որ նորից չեմ կարողանա խմել մամայիս ուղարկած գազարի և խնձորի հյութը:

Վախենում եմ, որ գազարի ու խնձորի հյութի հոտն էլ ժամանակի ընթացքում արյան հոտի պես կվախեցնի ինձ:

Վախենում եմ, որ առողջանալուց և տուն գալուց հետո կտեսնեմ, որ մամաս նստել է աթոռի ծայրին՝ հեռախոսի կողքին և հիվանդանոցից զանգի է սպասում

Վախենում եմ, որ մամաս չի հավատա, որ արդեն լավ եմ, որ նորից տատիկի հետ տուն եմ եկել:

Վախենում եմ, որ մամաս չի ուղղի իր գանգուր մազերը, տեղից վեր չի կենա, գազարի ու խնձորի հյութ չի քամի ինձ համար:

Արյունաբանական հիվանդանոցի կողքի փողոցի եզրին և այգում ծեր սպիտակ ծառեր կան . կարելի է անվերջ նայել այդ ծառերի ճյուղերին: Կարելի է նստել ու երկար հետևել ցայտաղբյուրից հոսող և հին, կապույտ մոզաիկայով զարդարված ջրավազանի մեջ լցվող ջրին:

Այս տարի ապրիլի 17-ին չեմ գնալու Արյունաբանական կենտրոն, որովհետև թագավարակն աշխարհ է եկել, փակել է դռները, մեկուսացրել է մարդկանց: Հեռուստացույցով, ռադիոյով, համացանցում, ներսում, դրսում ամենուրեք հնչում է՝ «թագավարակ, թագավարակ, թագավարակ»: Տեսնես թագավարակով հիվանդների տատիկնե՞րն էլ իմ տատիկի նման կկանգնեն մահճակալի մոտ ու կբռնեն իրենց թոռների թևերը: Թվում է թագավարակն անկանխակալ է՝ խտրականություն չի դնում տղաների և աղջիկների միջև: Ասում են՝ թագավարակը դաժան է, տատիկներին ու պապիկներին է տանում:

Այս տարի ապրիլի 17-ին չեմ գնա Արյունաբանական կենտրոն, չեմ տեսնի հեմոֆիլիայի հետ ապրող իմ արյունակից եղբայրներին, չեմ տեսնի իմ ծերացող ու ջահելացող բժիշկներին: Ով գիտի իմ բժիշկները հիմա հիվանդանոցո՞ւմ են, թե մյուսների պես զգեստավորվել են և փորձում են իրենց ենթարկել ցլի պես կատաղած թագավարակը:

Այս տարի չեմ վախենում, որ հիվանդանոցի շեմին ծնկներս կծալվեն, որ նորից արյան հոտ կզգամ, որ կընկնեմ անդունդն ու բժիշկների ձեռքով հետ կբերվեմ այնտեղից, որ կգնամ տուն և մամայիս կտեսնեմ՝ գանգուրները ուսերին թափված և հեռախոսի կողքին նստած . . .

Վախենում եմ և թաքուն խնդրում, որ թագավարակը իմ տատիկից, բոլոր տատիկներից հեռու մնա: Վախենում եմ ու լռում . լռությունս աղոթք է դառնում, իսկ աղոթքը՝ թափանցիկ ռետինե խողովակի միջով հոսող, կաթիլ առ կաթիլ իմ երակի մեջ լցվող դեղին հեղուկ: